

բանական հակառակ ուղղութիւնները, որոնք հարելը տարուց աւելի կռոււմ էին միմեանց հետ, քննելի շրջանի վերջը իրենց եկեղեցական ուղղութիւնների մէջ հաշտուում են, և ոչ միայն մեկնաբանութեան շրջանում, այլ և դաւանաբանական տեսութիւններէ մէջ:

(Շարունակելի)

Արեսակ Վարդապետ



ԲԱԳԱ ԳԻՒՂԻ ԱԻԵՐՈՒՄԸ

Ժ.

Հայերի դուրսիւնը Բագլիգում, Զիւլպաղարովների մտադրութիւն հայերին բաժանելու: Չու դեպի Ղուլալի, Կաղիմ Իբադուլլան օղլի եւ նրա կողոպտելը հայերին. Բաղադիների վիճակը Շամսադինու հայ գիւղերում. Չու դեպի վերին Աղդան գիւղը. Հայերի դուրսիւնը Քարվանսարա գիւղում եւ դարձը դեպի Բագա.

Դառնանք կրկին Բագլիգ գիւղը: Այստեղ հայերը, որ տեղաւորուած էին զանազան և ջոկ ջոկ շինութիւններում, չու նէին միմեանց հետ փոխադարձ յարաբերութիւն, ըստ որում դրսի ահից փակուած էին մնում օր-ցերեկով անդամ: Ձէին վստահանում դուրս դալ ու խմելու ջուր վերցնել առուակից որ հոսում էր մի քանի քայլ հեռու: Կոստանդենց Չաքարը մի անգամ փորձեց ջուր բերել առուից և ենթարկուեց կողոպտուտի. նա զրկուեց հադի շորերից: Այս սրտամաշ դրութիւնը անտանելի էր նրանց համար և նրանք իւրաքանչիւր ժամ սպասում էին որ բէգերը բարեհաճեն նախ թոյլ տալ նրանց դուրս դալ դէպի Ղուլալի գիւղը և երկրորդ՝ ապահովել նրանց ճանապարհը վտանգից:

Իսկ բէգերը, ընդհակառակը, որոշ պատասխան չէին տալիս: Զգուշանում և զգուշացնում էին թուրքերի յարձակումներին: Գիշերները բէգերը պահապան էին կանգնում փակուած հայերի վերայ, մանաւանդ Մեհրալի բէգը և նրա երիտասարդ Խանօղլան որդին: Վերջինիս մասին քանիցս պատմում էին որ հրացանը ուղղելով թուրք խուժանի խմբապետների դէմ սպառնում էր նրանց մահուամբ, եթէ նրանք կշարունակեն իրանց յարձակումները Բագլիգում ապաստանած հայերի վերայ և եթէ ձեռք չեն քաշիլ իրանց պահանջներից, այն է թէ, հայե-

ըին կամ պէտք է ջնջենք կամ պէտք է կրօնափոխ անենք: Քանիցս պատմում էին որ իբրև թէ Մեհրալի բէգը հեռացրել է այդ հրոսակներին մերթ սպառնալիքով, մերթ խնդիրներով:

Հայերը միահուած լինելով՝ կտրուած էին արտաքին աշխարհից: Տեղեկութիւնները և բէգերի զիտաւորութիւնները հայերի մասին՝ վերջիններս ստանում էին բէգերի ծառաներից, այն էլ կցկաուր կերպով, աւելուածներով և պակասորդներով և ծածկաբար: Հայերի Բագլիգ դալուց յետոյ ծառաները լուրեր էին տարածում թէ բէգերը միաք չունին հայերին ուղարկել գէպի Շամշադին, այլ կամենում են բաժանել զանազան թուրք գիւղերի վերայ որ հեշտութեամբ կարողանան սպանել նրանց, եթէ կրօնափոխ չլինին և կամ եթէ օտար հայերը յարձակուեն թուրք գիւղերի վերայ, որի մասին արդէն լուրեր էին պատուում:

Հայերի կասկածն աւելանում էր երբ տեսնում էին նոր թուրք մարդիկ են երևում Բագլիգում, Վերջապէս՝ հայերի այստեղ խմբուելու չորրորդ օրը եկաւ Ալլահիար բէգի որդի Մահմադ բէգը և Աղասոնց բոլա Մարախրոսին պատուիրեց խմբից ջոկել 40—50 հոգի և ուղարկել Քեշիշբեանդ Ալլահիար բէգի հովանաւորութեան ներքոյ ապրելու: Ամեն մի շարժում և մինչև անգամ հասարակ խօսակցութիւն Բագլիգում՝ ապտտանած բազացիներին միտամնաւոր էր երևում. շարաթ առաւօտեան մի թուրք կին բացեց ներսէս քահանայի և սրա ընկերների սենեակի դուռը, գլուխը կոխեց ներս և ծիծաղելով ու հեզնաբար հարցրեց նրանց առողջութիւնը և ապա յայտնեց որ բէգը նոր կարգաց լրագրի մէջ թէ Քանձակի մօտ հայերը մի թուրքի գիւղ են աւերել: Տեսնում էք, միթէ դուք, հայերդ, հանդիսա մնում էք որ ձեզ խղճան և այստեղից ձանապարհ զնեն. Ձէ, ձեզ փրկու թիւն չկայ առանց կրօնափոխութեան...:

Բագլիգի հայերին, իրանց թշուառ դրութեան մէջ, լսել այսպիսի վհատեցուցիչ լուրեր և տեսնել ծածկաբար խորհրդածութիւնները, կորստեան անդունդի դուռը բացուած էր թւում: Ամէնքը, լսելով այդ հիւսուած լուրերը, խիստ գայրանում էին:

Մանաւանդ խիստ վերաւորական թուեց բազացիներին այն, որ բէգերի ծառաները որպէս թէ բէգերի կողմից, տոռւմ էին թէ անգադար յարձակող խուժանին հանդստացնելու համար թող հայերը յայտնեն, որ Բագլայի աւերելու գործում մեղաւոր իրանք բազացիներն են, որ իրանց վարմունքով գրգռեցին անմեղ թուրքերին և պատճառ դարձան իրանց տարաբաղդութեան և սեփական գիւղի աւերման և այժմ իրանց մեղքերը

քաւելու համար հայերը թող ասեն թէ «մեզքը մերն է, յայն-
ցաւորը մենք ենք, այժմ ներեցէք մեր մեղքերը, մեզ բաշխե-
ցէք առաջ Աստուծուն և ապա ձեզ (խուժանին) ու բէգերին»։
Այս, և նման դէպքերը կաշկանդուած հայերի գրութիւնը
աւելի ևս դառնացնում էին և տեսնելով որ բէգերին զիմոզ-
ները մի դրական պատասխան չեն ստանում, Ներսէս Քահա-
նան հէնց այդ օրը անմիջապէս ղիմեց Համիդ բէգին՝ յայտնե-
լով հայ ժողովրդի անսահման շնորհակալութիւնը և ներողու-
թիւն խնդրելով տուած նեղութիւններն համար, հայցեց որ
բէգը բարեհաճի ուղարկել նրանց Ղուլալի։

Համիդ բէգը առաջարկեց քահանային որ իւր հետ բերի
բէգի մօտ և ուրիշ չորս հայ՝ խորհրդակցութեան համար։ Երբ
քահանան և հայերը ներկայացան Համիդ բէգին, սրա մօտ էին
Մեհրալի և Սէօուն բէգերը։ Համիդ բէգը ցոյց տալով իւր ասան
մօտ հաւաքուած թուրք բաղմութիւնը, յայտնեց հայերին որ
ինքը հաւաքել է այս թուրքերին, որպէս զի հայերին բաժանի
իրանց մէջ, ուր հայերը ապահով կընակուեն մինչև դարուն,
մինչև Բաղայի վերակազմութիւնը։

Այդ անպատեւի կարգադրութիւնը սարսափեցրեց հայե-
րին և քահանան աղերսեց որ իրանց, փոխանակ բաժանելու
թուրքերի վերայ, ուղարկեն Ղուլալի։ Համիդ բէգն այլայլուեց
և դառնութեամբ պատասխանեց։

— Վաղը Ղուլալին էլ դուցէ հասնի Բաղայի վիճակին, և
դուք կամենում էք դնալ Ղուլալի։ Այստեղ մնալով դուք
աւելի ապահով կլինիք։

— Ոչ աղերսում եմ, բէգ, լաւ է մեզ Ղուլալիում կո-
տորուել՝ քան այստեղ մնալ, պատասխանեց քահանան։

— Ձեզնից ոմանք արդէն ցանկութիւն են յայտնել մնալ
այստեղ։ Իսկ չցանկացողը միայն դու ես, բարկացած պատաս-
խանեց Համիդ բէգը։

— Ներեցէք, բէգ, մենք էլ համաձայն ենք Տէր Ներսէսի
հետ. խնդրում ենք արձակել մեզ և հալալ անել մեզ ձեր հացը,
աւելացրին միւս չորս հայերը։ Փոքր մտածմունքից և լռու-
թիւնից յետոյ՝ Համիդ բէգը պատուիրեց որ վաղը պատրաս-
տուեն դուրս դալու. Քահանան խնդրեց որ առանց Համիդ
բէգի հովանաւորութեան՝ հայերը չեն կարող ճանապարհ դուրս
գալ։ Բէգը պատասխանեց որ ինքը ժամանակ չունի, այլ կու-
ղեկցի Մեհրալի բէգը։

Հետեւեալ օրը, կիրակէ, 1905 թուի նոյեմբերի 27-ին,
ըստ պատուէրի, դուրս եկան դոմերից լոյս աշխարհ այն հա-
յերը, որոնք պատրաստութիւն յայտնեցին դնալ Ղուլալի։

Դրանք բազմաթիւ էին: Մնացին Բաղլիզում Գէշիշքեանդ դնալու մօտ 60 հոգի:

Ղուլալի գնացող հայերը դուրս եկան և խմբուեցին մի տեղ և երբ տեսան շարքով կանգնած Մէհրալի բէգի մօտ 20 զինուած և ձիաւորուած թուրքերին, կանայք և երեխայք սկսեցին ահից լալ: Դրանց շարքում բազայի ճանաչեցին շատերին, որոնք մասնակցել էին Բազայի աւերմանը: Զանազան տներից ծանօթ թուրքերը բերում էին հայերի համար հաց, պանիր կամ այլ ուտելիքէն: Զիւաւոր ուղեկիցների գլուխ անցաւ Մէհրալի բէգը, նոյնպէս զինուած:

Կարավանը շարժուեց դանդաղ քայլերով դէպի Ղուլալի: Հայերը գնում էին ցան ու ցիր, ճանապարհի տարածութեան վերայ սփռուած, և նրանց յետևից բաւականին հեռու, իւր ձիաւորներով՝ Մէհրալի բէգը: Եղանակը արև և ցուրտ, ճանապարհները չոր: Հէնց նոր հասել էին Սղբուլաղ և Զիրդախան թրքաբնակ միմեանց կից դիւղերին, հայերը յանկարծ նկատեցին Բաղլիզի կողմից արագընթաց եկող 4 զինուած ձիաւորների, որոնք ուշ չդարձնելով Մէհրալի բէգի և նրա թիկնապահների վերայ՝ շտապեցին առաջ դէպի հայկական կարավանը: Հայերը զարմացմամբ նայում էին այդ եկւորների կողմը և նախազգուծ էին մի չարիք: Եկուորները նախ իջել էին Բաղլիզում, հարցրել էին հայերի մասին և նորից ձի հեծնելով դնացել էին նրանց յետևից:

Դեռ ևս հեռուից չորսն էլ երգելով արշաւում էին դէպի հայերը: Անցնելով հայերի առաջ, իջան ձիերից և կանգնեցրին կարավանի շարժումը: Հայերը սեղմուեցին իրար խմբապետը փամփուշտը դրեց հրացանի մէջ, ընենց նրան պատրաստի, ապա խրոխտաբար դուրս կանչեց ամբոխի միջից ներսէն քահանային և յայտնեց նրան իւր խիտ դատարկելուը: «Ասա՛ բոլոր այս հայերին, շարունակեց կատաղաբար խմբապետը, որ ինչքան փող ունեն և արծաթեղէն ու ոսկեղէն զարդեր, արծաթէ գօտիկներ և այլն բոլորը, բոլորը պէտք է ձգեն այս գլխածածկոցի վերայ: Թող մէկ մէկ մօտենան ձգեն և հեռու կանգնեն: Յետոյ ես պէտք է մի առ մի խուղարկեմ և եթէ մէկի մօտ գտնեմ մի իրեղէն, մի գրամ, երգւում եմ հազրաթ Աբառի գերեզմանով, որ բոլորիդ էլ կսպանեմ, կկոտորեմ: Դէհ, դնա՛, յայտնիր» ասաց աւազակապետը:

Քահանան խնդրեց, աղերսեց թշուառ հայ ժողովրդին որ խնայել իրանց կեանքին, ձգեն ամէն բան և ոչինչ չթողնեն: Հայ կնոջ գլխից մի շալ փռեցին դաշտի վերայ, կողոպտիչներից երկուսը կանգնեցին շալի աջ ու ձախ և ապա հայ

կանայք, աղջկուներ, տղամարդիկ մէկ մէկ մօտենում էին և զարդ ու զարդարանքները պոկում գցում էին շալի վերայ, այլ և դրամ, արծաթէ գօտիկներ և այլն:

Երբ հերթը հասաւ Ղահրաման Դաթոյեանցին, որ մի հարուստ վաճառական էր և որի հիւրասիրութիւնը քանիցս անգամ վայելած էր գաղան խմբապետը, մօտեցաւ երկու հինգ ու ութլիանոց թղթադրամը ձեռքին ու խնդրեց որ մէկը իրան բաշխի. աւագակապետը ստատիկ բարկացաւ, հայհոյեց և առաց, ոտիկներ բեր և ոչ թող թ փող. և երբ ոտիկներ չերևացին՝ ենթարկեցին Ղահրամանին խուզարկութեան և ոչինչ չգտնելով՝ նորից հայհոյեց: Վայնասունը, լացն ու կօծը բնկել էր հայ կանանց մէջ: Արդարացաւ Համիդ բէգի նախագուշակութիւնը:

Այդ տեսարանին լուռ և անտարբեր վկայ, հեռու կանգնած Մեհրալի բէգը իւր օգնութեան և միջնորդութեան ղիմող հայերին պատասխանում էր որ ինքն էլ վախենում է արենարբու կողոպտիչներից և խորհուրդ էր տալիս ամէն բան զոհել, որ գոնէ արիւնհեղութիւն չպատահի: Ոմանք հայերից՝ այդ կողոպուտի ժամանակ, կարողանում էին ծածկաբար պահ տալ Մեհրալի բէգին իրանց զարդերը. Հեղինակին պատահեց Ղահալի գիւղերից մէկում, այդ կողոպուտից չորս տարի յետոյ, այս կողոպուտին մի բազացի ենթարկուած, որ պատմում էր թէ իւր կնոջ արծաթէ գօտին պահ է տուել Մեհրալի բէգին և անոահման հաւատալով այդ բէգի հաւատարմութեանը, վրստահ էր որ 10 տարուց յետոյ անգամ յետ կըստանայ բէգից իւր կնոջ գօտին:

Բոլոր կողոպտած իրեղէնները առած, աւագակապետը նորից վերադարձաւ Բագլիգ, որ հեռու էր միայն 3 վերստ և այն տեղից իւր Կոյլասար գիւղը:

Ջիրգախանի մօտ այս կողոպուտի կատարուելը ամենևին հաճելի չէր Ջիրգախանի թուրքերին և նրանցից ծերունի Մահմադ Թաղին յանդիմանութիւն արաւ Մեհրալի բէգին որ սա չկարողացաւ կողոպուտի դէմն առնել, որով միւս հայերը կթշնամանեն Ջիրգախանցոց հետ:

Այս տեղից Մեհրալի բէգը իւր թիկնապահներով վերադարձաւ Բագլիգ, իսկ հայերին մինչև մօտակայ Ջինարլի ուղեկցեցին Ջիրգախանիք: Հայերը այստեղ էլ չմնացին անփորձ, Ջիրգախանի և Ջինարլուի միջնալայրի անտառուտում անյայտ թուրքեր յափշտակեցին Յարութիւն Դանիէլեանցի գլխարկը և Ղահրաման Դաթոյեանցի հագուստը: Վերջինս մնաց միայն մի շապիով և վարդիքով, և ամաչում էր մտնել հայ գիւղը:

Քայց որովհետեւ Զինարարութիւն հայերը ահից փախել էին 3 վերստ հեռու Ղուլալի գիւղը և առաջին գիւղում պատահեցին խոտ կրող սայլապաններ, ուստի այս վերջինները Ղուլալուց բերին Պաթոյեանցի համար հագուստ: Մի քանի օր առաջ տասնեակ հազարների տէրը՝ այսօր հագուստ չունէր մերկութիւնը ծածկելու:

Ուժադաւան, ընչազուրկ, տարտափահար հայ փախստականները Զինարարի հայ գիւղում զգացին որ թէպէտ մերկ և քաղցած, բայց ազատ կարող են շունչ առնել: Հինգ օր անընայ երեւոյնքը լուացին Զինարարի սառնորակ աղբիւրի ջրով, ապա դառնալով մօտակայ պատմական «Խորանաշատ» աւերակ վանքի կողմը, խաչակնքեցին երեսները, աղօթեցին ու քիչ հանգստացան, որպէս զի շորունակեն ճանապարհը մինչև Ղուլալի:

Յրուեցին տանջուած բազացիները Շամշադինու հայ գիւղերի վերայ և մի կերպով կարողացան պահել իրանց գոյութիւնը: Որոնք ունէին այս և այն գիւղում աղգականներ, բարեկամներ, ծանօթներ, նրանք գնացին վերջիններիս մօտ, իսկ մեծամասնութիւնը երկու շաբաթ մնալով Ղուլալի բաւական նեղութիւն տրւին տեղացի հայերին, որ առանց այն էլ սակաւ ուտելիք ունէին: Ապա անկարող լինելով շարունակ կերակրել և ընակարան տալու բոլոր հիւրերին էլ. գիւղի առաջաւորները—այն է Գուրգէն քահանայ Ղազարեանց, տանուտէր Ստեփան Կարապետեանց, Պետրոս տէր Պետրոսեանց, Սարգիս Յակոբեան և այլք խորհուրդ կազմեցին և մասնակցելու հրաւրեցին երկերկու ներկայացուցիչ Շամշադինու բոլոր հայ գիւղերից, այն է Կարմիր աղբիւրից, Մովսէսից, Թովուզից, Հախումից և Նաւուրից, ուր որոշուեց բաժանել և պատասպարել բազացիներին:

Սակայն պէտք է նկատի ունենալ, որ Շամշադինը իւր գթաւատութեամբ հանդերձ չէր կարող երկար ժամանակ օգնել բազացիներին, ըստ որում այդ միջոցին ինքը ճգնաժամի մէջ էր և լսրուած ուժերով հերոսաբար գիմադրում էր Ղազախի վայրենի թուրք խուժանի անմիտ յարձակումներին:

Բազացիներից շատերը մեծ նեղութեան մէջ էին, հազիւ կարողանում էին ընակութեան համար ճարել մի գոմ, մի մարաք, մի մութ սենեակ, մի ահագին գերդաստանի համար հաղիւ մի վերմակ: Ժամանակը ձմերային էր և ցուրտ, երկիրը լեռնոտ և ձիւնով ծածկուած, ուստի և բազացիներից մի մեծ խումբ պատրաստուեցին անցնել Ղազախի գիւղերը, և այն տեղից եթէ կարելի է, Թիֆլիզ: Հաւաքուեցին Նաւուր գիւղը, որ դրած է Շամշադինու վերջին սահմանում: Այդ տեղից Գար-

վանորայ գիւղը և Դիլիջանի խճուղին հասնելու համար հարկաւոր էր նախ և առաջ գնալ Վերին Աղզան գիւղը:

1905 թուի գեկտեմբերի 29, հինգշաբթի Ծննդեան պատի քարեկենդանի վերջին օրը, Բաղացոց առաջին խումբը երկու ուղեցոյցի օգնութեամբ, առաւօտ դուրս եկաւ Նաւուրից և իջաւ Հասան-Սու գետի ձորը: Ծարաւները կուշտ խմեցին այդ լեռնային վճիռ ջրից, խմացրին և երեխանց որ մինչև Վերին Աղզան այլ ևս ջուր չուզէն, ըստ որում ճանապարհի առատաջուր լեռները իրանց ազդեւրներով արդէն իսկ ձիւնի տակ էին: Կարաւանը կազմում էին 50—60 հոգի երկսեռ:

Ձորից և անտառից դուրս եկան ամայի լեռների բարձրութիւնները, որոնք իսկ դարնանք և ամառը գրախտի նման, այժմ ձիւնով խորապէս ծածկուած են: Շամշադինու թուրքերը և հայերը Ղաղախի հայերի հետ իրանց ապրանքներով և բաղմաթիւ սլտարներով ամարանոց են դուրս գալի այդ տեղ իրը և արօտատեղիներ: Տղամարդիկ շալակել էին երեխանց և բռնել կանանց ձեռքի ու սագերի նման դնում էին միմեանց յետևից խոր ձիւնի պատճառով:

Դուրս եկան խաչ—Բուլախ անունով հայկական աւերակ գիւղատեղը՝ իւր առատ ջրերով և շրջակայ ընդարձակ արօտատեղերով: Հաւանեցին տեղը և մտադրուեցին խնդրել կառավարութիւնից նոր Բաղա հիմնել այդ տեղ: Բայց խաչ—Բուլաղը նշանակուած էր ռուս դաղթականների համար: Դժուարութեամբ անցան ալեծածան բլուրները, վերջապէս հասան Առգաղի (Մեղուառար) բարձունքը, որ կախուած է Վերին Աղզանի գլխին:

Ահա խոր ձորի մէջ հոռում է օձապտոյտ Աղոտե գետը և նրա ափերով ուր մուր գնում է Դիլիջանի գեղեցկատես խճուղին: Գետի ափին դրած է Քարվանսարա գիւղը: Առգաղից սկսւում է դառ ի վայրը գէպի Վերին Աղզան: Ճանապարհ չկայ, տեղ ժայռեր են, տեղ անտառ է, տեղ ձոր և բոլորը ձիւնով ծածկուած: Կարաւանը ոչ թէ գնում էր, այլ սողում և ու ընկնում էր, այլ ևս չէր կարողանում կանգնել ոտքի վերայ մինչև մի յենարանի հասնելը:

Նոյն օրը երեկոյեան դէմ՝ վերջապէս հասան Վերին Աղզան, մի կերպ բաժանուեցին տների վերայ, տեղաւորուեցին գոմերում, խորշերում և այլն: Ցերեկով գնում էին Քարվանսարայ գիւղը մի որ և է տեղեկութիւն իմանալու, ըստ որում այդ գիւղն ունի փոստատուն, հեռագրատուն, դատարան, պաշտօնարաններ. ստացւում են լրագրեր, յարաբերութիւն ունեն թիֆլիզի հետ «Աղտաֆա» կայարանի միջոցով: Մի խօսքով Քարվանսարան համարւում էր մի կենդրոն:

Բազացիք 15 օրից աւելի մ'նացին Վերին Աղղանում: Շամշադինուց էլի նոր խմբեր էին գալի: Սրանք երբեմն մուրացկանութեան էին գնում հայ գիւղերը: Գործ էին որոնում և չէին գտնում: Քարվասարայում թթու կաղամբի ջուր անդամ խնայում էին բազացի աղքատ կանանց: Առհասարակ սոսկալի էր այդ տեղ բազացիների դրութիւնը*: Գարունը բացուելուն պէս մի փոքր մշակութեան գործ գտան Քարվանսարայում, օրական 20, 25 և 30 կոպէկով:

Թիֆլիզի կենդրոնական նպաստամատոյց յանձնաժողովը շատ լաւ գիտէր այս տեղի բազացիների դրութիւնը և ուղարկում էր Քարվանսարայի տեղական յանձնաժողովի անունով ցորեն և դրամ: Հասաւ դարունը: Կենդրոնական յանձնաժողովը կարգադրեց որ բազացիները թողնեն Ղազախ և կամաց կամաց հաւաքուեն, գնան Բաղա նորից տիրանալու և չէնացնելու: Բայց բազացիք նպաստները ստանում էին, իսկ գնալ Բաղա խիստ դժուարանում էին: Ղազախի բոլոր հայ գիւղերում ցրուած էին բազացիք և մնացին մինչև 1907 թուի դարունը:

Թիֆլիզի նպաստամատոյց յանձնաժողովը 1907 թուի փետրուարին սպառնալիք կարգաց Ղազախի բազացիներին, որ այդ փետրուարի 20-ից յետոյ գաղարեցնելու է նպաստները. իսկ բազացիները հեռագրով խնդրում էին Թիֆլիզի թեմակալ արքեպիսկոպոս Սաթուհեանին շարունակել նպաստները: **:

Նպաստամատոյց յանձնաժողով յարգելով բազացիների խնդիրը, փոխեց իւր սպառնալիքը և իւր շրջիկ ներկայացուցիչ Ս. Տէր Պողոսեանցի ձեռքով, 1907 թուի մարտին ցուցագրեց Քարվանսարայում եղած բազացիներին (210 հոգի) նորից բաժանեց մի հազար ռուբլի՝ այն խիստ պայմանով որ մինչև սոյն մարտի 15-ը ամէնքն էլ գնան Բաղա: Այս սպառնալիքն էլ չազդեց բազացոյց, մանաւանդ նրանց, որոնք միջոց ունէին օրական 20—50 կոպէկ աշխատելու:

Բայց Քարվանսարայի տեղական յանձնաժողովը որ դորժադրում էր Թիֆլիզի նպաստամատոյց յանձնաժողովի կարգադրութիւնները, աւելի կտրուկ միջոց դառաւ բազացիներին հայրենիք ուղարկելու: Նա նախ յորդորում էր և վերադարձի համաձայնութիւն առնում ցանկացողներից և ճանապարհածախքը փոխանակ վերադարձողների ձեռքը տալու, ինքն էր

* Արշալոյս № 22. փետր. 12. 1906 թ.


** Մշակ 1907 թ. № 58 փետր. 20.

վարձում ֆուրգոններ, գնացողներին նստեցնում և ճանապարհ դնում: Այսպիսով տեղական յանձնաժողովը մինչև 1907 թուի մարտի վերջը կարողացել էր Բաղա վերադարձնել 500—600 հոգի *:

Յիշենք այստեղ, որ մենք թողել ենք Բագլիգում և Քէշիշքեանդում բազալիներից մի մի խումբ, որոնց վիճակի մասին հարկաւոր է տեղեկանալ. ուստի կրկին վերադառնանք Բագլիգ:

Շարունակելի

Քաջբերունի.



ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ

X.

Մինչև այժմ մեզ հետաքրքրում էր, թէ ինչ է Աբովեանի վէպի բովանդակութիւնը և ինչպիսի աշխարհահայեացք ունէին գիւղական կեանքի ներկայացուցիչները: Այժմ մեզ մնում է պարզաբանել վերջին խնդիրը, այն է, թէ ինչպէս է վերաբերում ինքը հեղինակը վերոյիշեալ երեք հասարակական խմբերին, և որանցից որի կողմն է նրա համակրութիւնը:

Որևէ հեղինակի դէպի մի դասակարգ ունեցած վերաբերմունքը պարզելու համար մեծ նշանակութիւն ունի որոշել, թէ ընդհանրապէս ինչ կողմերով է երևան հանում այս արուեստագէտը այն հասարակական խմբի կեանքը: Երբ հեղինակը որևէ դասակարգի կեանք պատկերացնում է ընդհանրապէս գրական կողմերով, այլ ևս կասկած չէ կարող լինել նրա համակրական վերաբերմունքին դէպի այն դասակարգը: Որքան էլ որ հեղինակը նիւթի մշակութեան ժամանակ նոյն իսկ ծայրայեղօրէն հաւատարիմ մնայ օրեկտիւ պատկերացման սկզբունքին, այնուամենայնիւ նիւթի այդպիսի ընտրութիւնը արդէն չէ կարող

* «Մշակ» 1907 թ. № 70 ապրիլի 1.